

## ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

2015թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանի ազգային գրադարանի Մատենագիտության և գիտական հետազոտությունների բաժնում տեղի ունեցավ «Հիշարժան տարեթվեր» գրքի, ինչպես նաև արտասահմանյան գրադարանների վերաբերյալ ռուսալեզու ամսագրերում տպագրված հոդվածների տեսություն: Ներկայացրեցին բաժնի աշխատակիցներ Գայանե Կարապետյանը և Նաիրա Մելքոնյանը:

«Հիշարժան տարեթվեր» գրքույկը հրատարակվում է յուրաքանչյուր տարի և նախատեսված է որպես օգնություն զանգվածային լրատվամիջոցներին, գրադարաններին, տեղեկատվական հաստատություններին, հասարակական, քաղաքական, մշակութային կազմակերպություններին՝ 2016թ. հոբելյանական տարելիցներին անդրադառնալու համար: Ներկայացվեց գրքի ստեղծման և տպագրման պատմությունը և սկզբունքները:

Ներկայացվեցին նաև գրադարանային աշխարհում առկա նորությունները՝ ըստ ռուսերեն ամսագրերի տվյալների: